«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Շարային պատրաստության ուսուցման առանձնահատկությունները
ԱՌԱՐԿԱ	ՆԶՊ
ՀԵՂԻՆԱԿ	Վոլոդյա Կարապետյան
ՄԱՐԶ	Երևան
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Վ. Համբարձումյանի անվ. թիվ 17 հիմնական դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 1

1.1 ՇԱՐՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ՆՐԱ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՄԱՍԵՐԸ 2

1.2 ԾԱՎԱԼՈՒՆ ԵՎ ԵՐԹԱՅԻՆ ՇԱՐՔ: ՏՈՂԱՆ ԵՎ ՇԱՐԱՍՈՒՅՆ 2

1.3 ՇԱՐՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ 3

1.4 ՇԱՐԱՅԻՆ ԿԵՑՎԱԾՔ 4

2 ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՇԱՐԺՎԵԼՈՒՑ ԱՌԱՋ ԵՎ ՇԱՐՔՈՒՄ **5**

3 ՇԱՐԱՅԻՆ ՎԱՐԺԱՁԵՎԵՐ, ԴԱՐՁՈՒՄՆԵՐ ՏԵՂՈՒՄ ԵՎ ՇԱՐԺՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ **6**

3.1 ԴԱՐՁՈՒՄՆԵՐ ՏԵՂՈՒՄ 6

3.2 ՇԱՐԱՅԻՆ ԴԱՐՁՈՒՆԵՐ ԱՌԱՆՑ ՁԵՆՔԻ: ՇԱՐԱՅԻՆ ՔԱՅԼ 7

4 ՇԱՐԱՅԻՆ ՎԱՐԺԱՁԵՎԵՐՆ ՈՒ ՇԱՐԺՈՒՄՆ ԱՌԱՆՑ ՁԵՆՔԻ **10**

4.1 ԴԱՐՁՈՒՄՆԵՐ ՇԱՐԺՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ 10

4.2 ՇԱՐՔԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼԸ ԵՎ ՇԱՐՔ ՎԵՐԱԴԱՌՆԱԼԸ 11

4. 3 ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՈՂՋՈՒՅՆԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՌԱՆՑ ՁԵՆՔԻ 12

4.4 ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՈՂՋՈՒՅՆԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՇԱՐԺՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ 13

5 ՋՈԿԻ ՇԱՐՔԵՐԸ **13**

5.1 ՋՈԿԻ ԾԱՎԱԼՈՒՆ ԵՎ ԵՐԹԱՅԻՆ ՇԱՐՔԵՐԸ 13

5.2 ՋՈԿԻ ՇԱՐՔԻ ՆՈՍՐԱՑՈՒՄԸ ԵՎ ԽՏԱՑՈՒՄԸ 14

5.3 ՋՈԿԻ ՎԵՐԱԴԱՍԱՎՈՐՈՒՄԸ 15

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 18

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ՝ *18*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Շարք: Այս բառի էությունն առանձնակի կապ ունի զինված ուժերի հետ:

Դեռևս հին ժամանակներում քաղաքակրթությունների բանալներում գործել է շարք, շարքեր, ֆաղանգներ (սպարտայի ստրկատիրական, մակեդոնական, բյուզանդական) և այլն:

Շարքը զինվորական կարգապահության ամրագոտին է, շարային պատրաստությունը բոլոր հաջողությունների, հաղթանակների գրավականը:

Ավարառու հորդաների բանակները թեև եղել են «տմա-տմուշայա», սակայն շարային որևէ կարգի չեն ենթարկվել:

Դարերի ընթացքում շարային կանոնադրություններն ընդօրինակել են մեկը մյուսից, կատարվել լրացումներ և փոփոխություններ: Ժամանակի ընթացքում ներքին գործող «Շարային կանոնադրությունը» նույնպես կենթարկվի փոփոխություններին լրացումների՝ կախված ԶՈՒ արմատական փոփոխությունների հետ, սակայն շարք, շարքի տեսակները, տարրերը, բաղկացուցիչ մասերը կմնան որպես հիմք:

Զինվորականների մարտական պատրաստության, ուսուցման ու դաստիարակության կարևորագույն առարկաներից մեկը շարային պատրաստությունն է: Այն կազմակերպվում և անցկացվում է ՀՀ ԶՈՒ շարային կանոնադրության նորմերին խիստ համապատասխան:

Խաղաղ ժամանակ՝ զորահանդեսներին, պատվո պահակախմբերում և կանոնադրությամբ նախատեսված այլ դեպքերում սովորողներին պարտավորեցնում է իմանալ՝

- դպրոցական ծրագրով շարային պատրաստություն,
- շարքի տեսակները, նրա բաղկացուցիչ մասերը,
- շարային վարժաձևերն առանց զենքի և զենքոց,
- շարքից դուրս գալը և շարք վերադառնալը,
- զինվորական ողջույնի կատարման եղանակները,
- հրամաններ տալու և կատարելու կարգը,

- զինծառայողների պարտականությունները շարվելուց առաջ և շարքում:

1.1 ՇԱՐՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ՆՐԱ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՄԱՍԵՐԸ

Զինծառայողների, ստորաբաժանումների ու զորամասերի՝ շարային կանոնադրությամբ սահմանված դասավորությունը համատեղ գործողությունների համար՝ հետիոտն և մեքենայով, կոչվում է **շարք**:

Յուրաքանչյուր շարք ունի հետևյալ բաղկացուցիչ մասերը՝ **ճակատ**, թիկունք, թևեր, տարածություն, հեռավորություն, լայնություն և խորություն:

Շարքում գտնվող զինծառայողների դիմային կողմը կոչվում է ճակատ:

Շարքի ճակատի հակադիր կողմը կոչվում **թիկունք**:

Շարքի աջ վերջավորությունը կոչվում է **աջ թև**, ձախ վերջավորությունը՝ **ձախ թև**:

Շարքի դարձումների (աջ դարձ, ձախ դարձ, հետ դարձ) ժամանակ թևերի անվանումները չեն փոխվում:

Շարքի ճակատում զինծառայողների արմունկների միջև եղած տարածքը (մեկ բռունցք) կոչվում է **տարածություն**:

Զինծառայողների, ստորաբաժանումների միջև դեպի խորքն ընկած արանքը կոչվում է **հեռավորություն**:

Շարքի թևերի միջև ընկած հեռավորությունը կոչվում է **շարքի լայնություն**:

Առաջին և վերջին տողաններում կանգնած զինծառայողների միջև եղած հեռավորությունը կոչվում է **շարքի խորություն**:

1.2 ԾԱՎԱԼՈՒՆ ԵՎ ԵՐԹԱՅԻՆ ՇԱՐՔ: ՏՈՂԱՆ ԵՎ ՇԱՐԱՍՈՒՅՆ

Շարքերն ըստ նշանակության լինում են **ծավալուն** և **երթային**:

Ծավալուն շարքը, որպես կանոն, շարվում է մեկ կամ երկու տողանով:

Մեկ գծի վրա, սահմանված տարածությամբ կողք կողքի շարված զինծառայողների շարքը կոչվում է **տողան**:

Ծավալուն շարքը կիրառվում է ստուգումների, ստուգատեսների, զորահանդեսների, շարային հաշվարկների ժամանակ և կանոնադրությամբ սահմանված այլ դեպքերում:

Երթային շարքը կիրառվում է ստորաբաժանումների շարժման համար և կազմված է շարասյուներից, կապված միջոցառման նպատակներից, տեղից, խնդիրներից:

Միմյանց թիկունքում շարժված զինծառայողների և իրար հետև կանգնած ստորաբաժանումների շարքը կոչվում է շարասույն:

Երթային շարքերը լինում են **միաշարասյուն, երկարասյուն** և այլն:

Երկտողան շարքում առաջին տողանի զինծառայողը և նրա թիկունքում կանգնած զինծառայողը կազմում են **կարգ**: Վերջին կարգը միշտ պետք է լինի լրիվ, ուստի երկտողան շարքի հետադարձի ժամանակ ոչ լրիվ կարգի զինծառայողն անցնում է առաջին տողան:

Միատողան (երկտողան, եռատողան) շարքերը կարող են լինել **խիտ** կամ **նոսր**:

Խիտ շարքում զինծառայողները տեղավորվում են կողք-կողքի՝ մեկը մյուսի արմունկից ձեռքի ափի լայնությամբ, իսկ նոսր շարքում ճակատով կանգնած զինծառայողների արմունկների միջև տարածությունը պետք է լինի մեկ քայլ կամ հրամանատարի նշած չափով (երկու, երեք քայլ և այլն):

Երթային շարքով շարժվելիս շարքի առջևից գնացող զինծառայողը (մեքենան, ստորաբաժանումը) կոչվում է **ուղղապահ**, իսկ շարասյունը եզրափակող զինծառայողը (մեքենան, ստորաբաժանումը) կոչվում է **վերջապահ**:

1.3 ՇԱՐՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Շարքերը կառավարվում են հրամանատարների (պետերի) հրամաներով ու կարգադրություններով: Հրամանները լինում են **նախնական** և **կատարողական**:

Օրինակ՝ «Դասակ, քայլո՛վ-ՄԱ՛ՐՇ» հրամանում«Դասակ , քայլով»-ը նախնական հրամանն է, իսկ «ՄԱ՛ՐՇ»-ը՝ կատարողական: Հրամանները կարող են լինել նաև միայն կատարողական, այսինքն՝ հրամայական բառեր՝ **«ԶԳԱ՛ՍՏ», «ՈՏՔԻ՛»**:

Հրամանի կատարողական մասը՝ հրամայական բառերը տեքստերու, հրամաններում, փաստաթղթերում, սովորաբար, գրվում են գլխատառերով:

Նախնական հրամանն արտասանվում է բարձրաձայն, հստակ, փոքր ինչ ձգելով, որպեսզի շարքում գտնվող զինծառայողները հասկանան, թե իրենցից կատարելու համար ինչ գործողություն է պահանջվում: Լսելով նախնական հրամանը՝ զինծառայողներն ընդունում են շարային կեցվածք՝ երբ գտնվում են շարքում, անցնում են շարային քայլի՝ երբ գտնվում են շարժման մեջ: Շարքից դուրս գտնվելիս զինծառայողները(զինծառայողը) շրջվում են հրամանատարի (պետի) կողմը և ընդունում են շարային կեցվածք՝ պատրաստ լինելով կատարողական հրամանից հետո անմիջապես կատարել պահանջված գործողությունը:

Կատարողական հրամանը տրվում է մի փոքր դադարից հետո, բաձրաձայն, հատ-հատ և հստակ:

Երբեմն անհրաժեշտ է լինում չեղյալ հայտարարել հրամանը կամ դադարեցնել սկսած գործողությունը: Այս դեպքում տրվում է «ԹՈՂՆ՛ԵԼ» հրամանը, որով զինծառայողներն ընդունում են իրենց նախնական դիրքը:

Ստորաբաժանումները շարելու համար հրամանատարը տալիս է «ՇԱՐՎԻ՛Ր» հրամանը՝ նշելով նաև շարվելու կարգը: Օրինակ՝ «Ջոկ, միատողա՛ն-ՇԱՐՎԻ՛Ր»:

Կամ՝ Շարային հրապարակում, «Ջոկ, միատողան ՇԱՐՎԻՐ»:

1.4 ՇԱՐԱՅԻՆ ԿԵՑՎԱԾՔ

Շարային կեցվածքի ընդունումը զինվորական ծառայության այբուբենն է: Այն ծառայողին ուղեկցում է զինվորական ծառայության զորակոչվելու առաջին օրվանից մինչև զորացրումը: Շարային կեցվածքի ընդունումը զինվորի մեջ

դաստիարակում է կուռ կարգապահություն, ուշադրություն, կատարողականություն, արտաքին հաճելի տես, զսպվածություն և այլն:

Շարային կեցվածք ընդունվում է «ԶԳԱ՛ՍՏ» կամ «ՇԱՐՎԻ՛Ր» հրամաններով: Լսելով այդ հրամանները՝ զինծառայողն առանց լարվելու կանգնում է ուղիղ՝ ոտնաթաթերը բացելով ոտնաթաթի լայնությամբ և հավասարեցնելով ճակատային գծի հետ: Ծնկները պետք է լինեն ուղիղ, գլուխը՝ բարձր պահած, կուրծքը և մարմինը՝ մի փոքր առաջ տված: Ձեռքերը պետք է ցած իջեցնել ազդրերի կողքով այնպես, որ դաստակների ափերը՝ կիսախուփ ծալված մատներով, հպվեն ազդրերին:

Կանոնադրությամբ սահմանված են շարային կեցվածք ընդունելու նաև այլ դեպքեր՝ Հայաստանի Հանրապետության պետական օրհներգի, զինվորական ողջույնի կատարման ժամանակ, զեկույց տալիս, կարգադրություններ անելիս և այլն:

2 ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՇԱՐԺՎԵԼՈՒՑ ԱՌԱՋ ԵՎ ՇԱՐՔՈՒՄ

Շարք կանգնելուց առաջ և շարքում զորամասերի (ստորաբաժանումների) հրամանատարներն ու բոլոր զինծառայողներն ունեն որոշակի, կանոնագրքերով, շարային կանոնադրությամբ և հրահանգներով ամրագրված իրենց պարտականությունները, որոնց անշեղ կատարումը յուրաքանչյուր զինծառայողի պարտքն է:

Նախքան շարք կանգնելը հրամանատարը նշում է շարվելու տեղը, ժամանակը, կարգը, համազգեստը, հանդերձանքը, տվյալ պահի համար անհրաժեշտ տեխնիկան ու տեխնիկական միջոցները, զինամթերքը, պաշտպանության անհատական միջոցները: Ստորաբաժանումը շարվելուց հետո ստուգում է դրանց առկայությունը, անձնակազմի արտաքին տեսքը, համազգեստի ու հանդերձանքի հարմարեցվածությունը, փոխադրվող միջոցների

ամրակապումը, անձնակազմի իմացությունը ազդանշանների, անվտանգության կանոնների մասին:

Զինծառայողը **պարտավոր է՝**

- գիտենալ իր տեղը շարքում և հրամանից հետո արագորեն զբաղեցնել այն,
- ստուգել իրեն ամրացված զենքի, ռազմական տեխնիկայի սարքինությունը, սակրային գործիքների և այլ հանդերձանքի առկայությունն ու վիճակը,
- շարքում չխոսել, առանց հրամանատարի (պետի) թույլտվության դուրս չգալ շարքից ու չծխել,
- շարժման ընթացքում պահպանել կանոնադրությամբ կամ հրամանատարի կողմից սահմանված տարածությունն ու հեռավորությունը, ուշադիր հետևել հրամանատարի հրամաններին ու ազդանշաններին:

3 ՇԱՐԱՅԻՆ ՎԱՐԺԱՁԵՎԵՐ, ԴԱՐՁՈՒՄՆԵՐ ՏԵՂՈՒՄ ԵՎ ՇԱՐԺՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

3.1 ԴԱՐՁՈՒՄՆԵՐ ՏԵՂՈՒՄ

Տեղում դարձումները զինծառայողները կատարում են ինչպես միայնակ, այնպես էլ ստորաբաժանումների կազմում:

Տեղում դարձումները կատարվում են «Ա՛ջ-ԴԱ՛ՐՁ» «Ձա՛խ- ԴԱ՛ՐՁ» և «Հե՛տ-ԴԱ՛ՐՁ» հրամաններով: Աջ դարձ և ձախ դարձ վարժաձևերը կատարվում են **մեկ քառորդ շրջան** դարձումով, իսկ հետադարձը՝ **մեկ երկրորդ շրջան**, ընդ որում, աջդարձը կատարվում է աջ ձեռքի կողմը՝ մարմնի ծանրությունը կենտրոնացնելով աջ կրունկի և ձախ ոտնաթաթի վրա, իսկ ձախդարձն ու հետադարձը՝ ձախ ձեռքի կողմը՝ ձախ կրունկի և աջ ոտնաթաթի վրա:

Բոլոր դարձումները կատարվում են երկու գործողությամբ (երկու հաշվով)(մեկ-երկու).

առաջին գործողություն՝ դարձում կատարել՝ պահպանելով իրանի ուղիղ դիրքը և, ծնկները չծալելով՝ մարմնի ծանրությունը փոխադրել առջևի ոտքի վրա,

երկրորդ գործողություն՝ մյուս ոտքը ամենակարճ ճանապարհով դնել առջևի ոտքի մոտ:

3.2 ՇԱՐԱՅԻՆ ԴԱՐՁՈՒՆԵՐ ԱՌԱՆՑ ԶԵՆՔԻ: ՇԱՐԱՅԻՆ ՔԱՅԼ

Շարժումը կատարվում է քայլով կամ վազքով:

Կանոնավոր քայլի չափը 70-80 սմ է, արագությունը՝ 110-120քայլ մեկ րոպեում:

Կանոնավոր վազքի դեպքում քայլի չափը 85-90 սմ է, շարժման արագությունը՝ 165-180 քայլ մեկ րոպեում:

Քայլը լինում է **շարային** և **երթային**: Շարային և երթային քայլերը միշտ սկսում են ձախ ոտքից:

Շարային քայլը կիրառվում է հանդիսավոր երթով ստորաբաժանումների անցնելու, շարժման ընթացքում զինվորական ողջույնի կատարման ժամանակ, շարքից դուրս գալու և շարք վերադառնալու դեպքերում, հրամանատարին (պետին) մոտենալիս և նրանից հեռանալիս, շարային պարապունքների ընթացքում:

Շարժումը շարային քայլով սկսելու համար տրվում է «Շարային քայլո՛վ-ՄԱ՛ՐՇ» հրամանը:

«Շարային քայլով» նախնական հրամանը լսելուն պես զինծառայողն իրանը մի փոքր առաջ է տալիս՝ մարմնի ծանրությունն առավելապես գցելով աջ ոտքի վրա և պահպանելով կայուն դիրք: «ՄԱ՛ՐՇ» կատարողական հրամանով ձախ ոտքի լրիվ քայլով սկսում է շարժումը՝ միաժամանակ ձախ ձեռքը տանելով հետ, իսկ աջը շարժելով առաջ:

Շարային քայլով շարժվելիս ձախ (աջ) ոտնաթաթը ձգված վիճակով կտրել գետնից 15-20 սմ բարձրությամբ և ամբողջ ներբանով պինդ դնելով գետնին՝ աջ (ձախ) թաթը միաժամանակ կտրել գետնից: Ձեռքերը, սկսած ուսերից, իրանի մոտով շարժել առաջ և արմունկը ծալել այնպես, որ դաստակը ձեռքի ափի լայնությամբ բարձրանա գոտու ճարմանդից վերև՝ մարմնից ափաչափ հեռավորության վրա: Ձեռքը հետ տանելիս ձգել մինչև վերջ: Ձեռքի մատները պահել կիսախուփ: Շարժման ընթացքում գլուխը և իրանը պահել ուղիղ, նայել առաջ:

Երթային քայլը կիրառվում է բոլոր այն դեպքերու, երբ շարային քայլով շարժվելու հրաման չկա:

Երթային քայլով շարժման ժամանակ ոտնաթաթն առանց ձգելու ազատորեն մեկնել առաջ և գետնին դնել այնպես, ինչպես սովորական քայլի դեպքում: Ձեռքերն ազատորեն շարժել իրանի մոտով հետ ու առաջ:

Երթային քայլով շարժվելիս, եթե տրվում է «ԶԳԱ՛ՍՏ» հրամանը, զինծառայողներն անցնում են շարային քայլի, իսկ շարային քայլի ժամանակ «ԱԶԱ՛Տ» հրամանով անցնում են երթային քայլի:

Տեղում քայլելու համար տրվում է «Տեղում քայլո՛վ-ՄԱ՛ՐՇ» հրամանը, իսկ շարժման ընթացքում տեղում քայլի անցնելու համար տրվում է « ՏԵՂՈՒՄ» հրամանը:

«Տեղում քայլո՛վ-ՄԱ՛ՐՇ» հրամանով զինծառայողներն սկսում են քայլել տեղում՝ ոտքը բարձրացնելով 15-20 սմ և իջեցնելով այնպես, որ գետնին հպվի ոտնաթաթի առջևի մասը: Ձեռքերը շարժում են քայլի տակտով:

Տեղում քայլելու ժամանակ «ՈՒՂԻ՛Ղ» հրամանը տրվում է զինծառայողի ձախ ոտքը գետնին դնելու պահին, ապա աջ ոտքով կատարվում է ևս մի քայլ տեղում, որից հետո միայն սկսվում է շարժումը առաջ լրիվ քայլով:

Շարժումը դադարեցվում է «Կա՛նգ -Ա՛Ռ» հրամանով:

Ինչպես տեղում դարձումների ժամանակ, այնպես էլ շարժման ընթացքում դարձումներ կատարելու համար տրվում են նույն հրամանները՝ «Ա՛ջ -ԴԱ՛ՐՁ», «Ձա՛խ -ԴԱ՛ՐՁ» և «Հե՛տ -ԴԱ՛ՐՁ»: Նախնական հրամանները՝ «Ա՛ջ», «Ձա՛խ» և

«Հե՛տ» լսելուն պես զինծառայողը պատրաստվում է կատարել կատարողական «ԴԱ՛ՐՁ» հրամանը:

Աջ դարձ կատարելու համար «ԴԱ՛ՐՁ» կատարողական հրամանը տրվում է զինծառայողի աջ ոտքը գետնին դնելու հետ միաժամանակ: Այդ հրամանը լսելուն պես զինծառայողը կատարում է ևս մեկ քայլ ձախ ոտքով, ձախ ոտնաթաթի մատների վրա հենվելով՝ կատարում է մեկ քառորդ պտույտ աջ և շարային քայլով շարժումը շարունակում նոր ուղղությամբ:

Ձախ դարձ կատարելու համար «ԴԱ՛ՐՁ» կատարողական հրամանը տրվում է զինծառայողի ձախ ոտքը գետնին դնելու հետ միաժամանակ: Այդ հրամանը լսելուն պես զինծառայողը կատարում է ևս մեկ քայլ աջ ոտքով, աջ ոտնաթաթի մատների վրա հենվելով՝ դառնում է մեկ քառորդ պտույտ ձախ և շարային քայլով շարժումը շարունակում նոր ուղղությամբ:

Հետ դարձ կատարելու համար «ԴԱ՛ՐՁ» կատարողական հրամանը տրվում է զինծառայողի աջ ոտքը գետնին դնելու հետ միաժամանակ: Այդ հրամանը լսելուն պես զինծառայողը կատարում է կես քայլ՝ ոտքը դնելով փոքր-ինչ ձախ: Ապա հենվում է երկու ոտնաթաթերի մատների վրա, մեկ երկրորդ պտույտ կտրուկ շրջադարձ է կատարում և ձախ ոտքով շարային քայլով շարժումը շարունակում նոր ուղղությամբ:

«ԴԱ՛ՐՁ» կատարողական հրամանից հետո աջդարձը և ձախդարձը կատարվում են երկու հաշվով, իսկ հետդարձը՝ երեք հաշվով:

Դարձումների ժամանակ ձեռքերի շարժումները կատարվում են համաչափ:

Հետադարձի ժամանակ հատուկ ուշադրություն է դարձնում կտրուկ շրջադարձի և ձեռքերի շարժումների վրա: «Երկու» հաշվի դեպքում, երբ աջ ոտքը տարվի կես քայլ առաջ և մի փոքր ձախ, այդ պահին պետք է ձախ ձեռքը տանել առաջ, իսկ աջը՝ հետ: Հենց որ աջ ոտքը հենվի ոտնաթաթի մատների վրա, շարունակելով ձեռքերի համաչափ շարժումը, կատարել կտրուկ շրջադարձ: «Երեք» հաշվի ժամանակ աջ ձեռքը շաժել առաջ, իսկ ձախը՝ հետ:

4 ՇԱՐԱՅԻՆ ՎԱՐԺԱՁԵՎԵՐՆ ՈՒ ՇԱՐԺՈՒՄՆ ԱՌԱՆՑ ՁԵՆՔԻ

4.1 ԴԱՐՁՈՒՄՆԵՐ ՇԱՐԺՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Ինչպես տեղում դարձումների ժամանակ, այնպես էլ շարժման ընթացքում դարձումներ կատարելու համար տրվում են նույն հրամանները՝ «Ա՛ջ -ԴԱ՛ՐՁ», «Ձա՛խ -ԴԱ՛ՐՁ» և «Հե՛տ -ԴԱ՛ՐՁ»:

Աջ դարձ կատարելու համար «ԴԱ՛ՐՁ» կատարողական հրամանը տրվում է զինծառայողի աջ ոտքը գետնին դնելու հետ միաժամանակ: Այդ հրամանը լսելուն պես զինծառայողը կատարում է ևս մեկ քայլ ձախ ոտքով, ձախ ոտնաթաթի մատների վրա հենվելով կատարում է մեկ քառորդ պտույտ աջ և շարային քայլով շարժումը շարունակում նոր ուղղությամբ:

Ձախ դարձ կատարելու համար «ԴԱ՛ՐՁ» կատարողական հրամանը տրվում է զինծառայողի ձախ ոտքը գետնին դնելու հետ միաժամանակ: Այդ հրամանը լսելուն պես զինծառայողը կատարում է ևս մեկ քայլ աջ ոտքով, աջ ոտնաթաթի մատների վրա հենվելով՝ դառնում է մեկ քառորդ պտույտ ձախ և շարային քայլով շարժումը շարունակում նոր ուղղությամբ:

Հետ դարձ կատարելու համար «ԴԱ՛ՐՁ» կատարողական հրամանը տրվում է զինծառայողի աջ ոտքը գետնին դնելու հետ միաժամանակ: Այդ հրամանը լսելուն պես զինծառայողը կատարում է ևս երկու քայլ՝ ձախ և աջ ոտքերով, ընդ որում աջով կատարում է կես քայլ՝ ոտքը դնելով փոքր-ինչ ձախ: Ապա հենվում է երկու ոտնաթաթերի մատների վրա, մեկ երկրորդ պտույտ կտրուկ շրջադարձ է կատարում և շարային քայլով շարժումը շարունակում նոր ուղղությամբ:

«ԴԱ՛ՐՁ» կատարողական հրամանից հետո աջդարձը և ձախդարձը կատարվում են երկու հաշվով, իսկ հետդարձը՝ երեք հաշվով:

Հետադարձի ժամանակ հատուկ ուշադրություն է դարձնում կտրուկ շրջադարձի և ձեռքերի շարժումների վրա: «Երկու» հաշվի դեպքում, երբ աջ ոտքը տարվի կես քայլ ձախի առաջ, այդ պահին պետք է ձախ ձեռքը տանել առաջ, իսկ աջը՝ հետ: Հենց որ աջ ոտքը հենվի ոտնաթաթի մատների վրա, երկու ձեռքն էլ

իջեցնել ցած՝ իրանին հենված, այդ վիճակում պահել կտրուկ շրջադարձի պահին: «Երեք» հաշվի ժամանակ աջ ձեռքը շաժել առաջ, իսկ ձախը՝ հետ:

4.2 ՇԱՐՔԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼԸ ԵՎ ՇԱՐՔ ՎԵՐԱԴԱՌՆԱԼԸ

Շարքից դուրս գալու համար զինծառայողին տրվում է հետևյալ հրամանը՝

«Շարքային Պողոսյան, շարքից դուրս գալ երկու (երեք և այլն) **քայլ»**:

Զինծառայողը, լսելով իր ազգանունը, պատասխանում է՝ **«Ես եմ»**, իսկ շարքից դուրս գալու դեպքում պատասխանում է՝ **«Լսում եմ»**: Այնուհետև, շարային քայլով դուրս է գալիս շարքից՝ նշված քայլերի քանակը հաշվելով առաջին տողանից, կանգնում է դեմքով շրջվում դեպի շարքը:

Եթե զինծառայողը դուրս է գալիս երկրորդ տողանից, ապա նա աջ ձեռքը թեթևակիորեն դնում է իր առջև կանգնած զինծառայողի ուսին, որը մի քայլ առաջ է գալիս և աջ ոտքը առանց ձախին մոտեցնելու՝ տանում է մի քայլ դեպի աջ, ձախ ոտքը միացնում աջին, շարքից դուրս գալու հնարավորություն է տալիս հետևի զինծառայողին, այնուհետև կանգնում է իր տեղում:

Առաջին տողանից զինծառայողի դուրս գալուց հետո այդ տեղը զբաղեցնում է երկրորդ տողանում նրա հետևում կանգնած զինծառայողը:

Երկշարասույն, եռաշարասույն (քառաշարասույն) շարքից զինծառայողը դուրս է գալիս մոտակա թևի կողմը: Դրա համար նա կատարում է աջդարձ (ձախդարձ), իսկ նրա կողքին կանգնած զինծառայողը աջ (ձախ) ոտքով մեկ քայլ է անում դեպի աջ (ձախ) կողմը և, առանց ձախ (աջ) ոտքը մյուս ոտքի մոտ դնելու, մի քայլ հետ է գնում, ոտքերը միացնելով իրարր՝ զինծառայողին շարքից դուրս գալու հնարավորություն է տալիս, այսուհետև կանգնում է իր տեղում:

Դուրս եկողը պետք է կարճ ճանապարհով շարժվի դեպի շարքի մեջտեղը և շարժման ժամանակ կատարի դարձում:

Շարք վերադառնալու համար զինծառայողին տրվում է հետևյալ հրամանը՝

«Շարքային Պողոսյան, կանգնե՛լ շարք» կամ ուղղակի **«Կանգնե՛լ շարք»**:

«Շարքային Պողոսյան» հրամանով նա դեմքով շրջվում է դեպի պետը և պատասխանում է՝ **«Ես եմ»**, իսկ **«Կանգնե՛լ շարք»** հրամանով ձեռքը մոտեցնում է գլխարկին և պատասխանում է **«Լսում եմ»** ապա շրջվում է շարժման կողմը, առաջին քայլի հետ միաժամանակ իջեցնում ձեռքը, շարային քայլով կանգնում իր տեղում:

Եթե տրվում է **«Կանգնե՛լ շարք»** հրամանը, ապա զինծառայողը վերադառնում է շարք՝ առանց շրջվելու դեպի պետը:

4. 3 ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՈՂՋՈՒՅՆԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՌԱՆՑ ՁԵՆՔԻ

Մենք 8-րդ դասարանում խոսել ենք զինվորական ողջույնի էության մասին, թե ե՞րբ է այն տրվում, ո՞վ է առաջինը ողջունում, ե՞րբ և որտե՞ղ զինվորական ողջույն չի տրվում: Զինվորական ողջույնը կատարվում է ՀՀ ԶՈՒ շարային կանոնադրության պահանջների համապատասխան:

Զինվորական ողջույնի կատարումը տեղում: Բոլոր դեպքերում զինվորական ողջույնը կատարվում է կտրուկ և ձգված՝ ճշտորեն պահպանելով շարային կեցվածքի ու շարժման կանոնները:

Երբ զինծառայողը գտնվում է շարքից դուրս է առանց գլխարկի է, նա զինվորական ողջույնի համար պետից (ավագից) երեք-չորս քայլ հեռավորության վրա պետք է շրջվի պետի կողմը, ընդունի շարային կեցվածք, նայի նրա դեմքին և գլուխը շրջի նրա շարժման ուղղությամբ:

Եթե զինծառայողը գլխարկով է, ապա, բացի դրանից, նա աջ ձեռքը մոտեցնում է գլխարկին այնպես, որ մատները լինեն իրար կպած, ափը՝ ուղիղ, միջամատը հպվի գլխարկի ներքին եզրին, իսկ արմունկը լինի ուսի բարձրությամբ: Գլուխը պետի (ավագի) կողմը շրջելիս ձեռքի դիրքը մնում է անփոփոխ:

Երբ պետը անցնում է ողջունող զինծառայողի մոտից, ողջույնը դադարեցվում է՝ զինծառայողը գլուխն ուղղում է և, միաժամանակ, իջեցնում ձեռքը:

4.4 ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՈՂՋՈՒՅՆԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՇԱՐԺՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Երբ զինծառայողը գտնվում է շարքից դուրս և առանց գլխարկի է, նա զինվորական ողջույնի համար պետից 3-4 քայլ հեռավորության վրա, ոտքը գետին դնելու հետ մեկտեղ, դադարեցնի ձեռքերի շարժումը, գլուխը շրջի է պետի կողմը և, շարունակի քայլել, նայի է նրա դեմքին: Պետի մոտով անցնելուց հետո գլուխն ուղղում է և շարունակում ձեռքերի շարժումը:

Երբ զինծառայողը գլխարկով է, նա ոտքը գետին դնելու հետ միաժամանակ գլուխը պետք է շրջի պետի կողմը, աջ ձեռքը մոտեցնի գլխարկին, ձախ ձեռքը հպելով կողքին՝ նայի պետի դեմքին: Պետի մոտով անցնելուց հետո ձախ ոտքը գետնին դնելու հետ միաժամանակ գլուխն ուղղում է, աջ ձեռքը իջեցնում ցած և շարունակում է շարժումը:

Պետից առաջ անցնելու դեպքում զինվորական ողջույնը կատարվում է անցնելու քայլի հետ միաժամանակ: Երկրորդ քայլի հետ զինծառայողը գլուխը պահում է ուղիղ, , աջ ձեռքը իջեցնում ցած:

Եթե պետը անցնում է մեքենայով, ապա զինծառայողը կանգնում է, շրջվում դեմքով դեպի պետի կողմը և ձեռքը հպում գլխարկին:

Եթե զինծառայողի ձեռքերն զբաղված են, զինվորական ողջույնը կատարվում է գլուխը շրջելով պետի կողմը:

Եթե զինծառայողը զբոսնում է աղջկա հետ, ապա ինքը պետք է գտնվի նրա աջ կողմում, որպեսզի զինվորական ողջույնի կատարման համար կարողանա բարձրացնել աջ ձեռքը:

5 ՋՈԿԻ ՇԱՐՔԵՐԸ

5.1 ՋՈԿԻ ԾԱՎԱԼՈՒՆ ԵՎ ԵՐԹԱՅԻՆ ՇԱՐՔԵՐԸ

Ջոկը գործում է ծավալուն (միատողան կամ երկտողան) և երթային (միաշարասյուն կամ երկշարասույն) շարքով:

Ջոկի շարժումը միատողան (երկտողան) կատարվում է՝ **«Ջո՛կ, միատողան (երկտողան)-ՇԱՐՎԻ՛Ր»** հրամանով:

Այդ հրամանով զինծառայողները շարվում են հրամանատարից դեպի ձախ՝ կանոնադրությամբ սահմանված տարածությամբ և հեռավորությամբ: Յուրաքանչյուր տողանում ոտնաթաթերի ծայրերը դրվում են մեկ ուղիղ գծի վրա:

Ջոկը տեղում միաշարասյուն (երկշարասույն) շարելու համար տրվում է **«Ջո՛կ, միաշարասույն (երկշարասույն)-ՇԱՐՎԻ՛Ր»** հրամանը:

Ջոկի շարժումը սկսվում է՝**«Ջո՛կ, քայլով»** (շարային քայլով, վազքով)-**ՄԱՐ՛Շ»** հրամանով:

Հրամանի կատարողական մասով բոլոր զինծառայողները միաժամանակ ձախ ոտքով սկսում են շարժումը՝ ընթացքում պահպանելով ուղղությունը, տարածությունն ու հեռավորությունը:

Ջոկի շարժումը դադարեցվում է՝ **«Ջո՛կ, կանգ -Ա՛Ռ»** հրամանով:

«Ջո՛կ-ՑՐՎԵ՛Լ հրամանով զինծառայողները դուրս են գալիս շարքից:

5.2 ՋՈԿԻ ՇԱՐՔԻ ՆՈՍՐԱՑՈՒՄԸ ԵՎ ԽՏԱՑՈՒՄԸ

Տեղում շարքի նոսրացումը կատարվում է՝**«Ջո՛կ, աջ** (ձախ, կենտրոնից) **այսքան քայլով-ՆՈՍՐԱՑԻ՛Ր** (**վազքով**-ՆՈՍՐԱՑԻ՛Ր)» հրամանով: Հրամանի կատարողական մասով բոլոր զինծառայողները, բացի նրանից, որից կատարվում է նոսրացումը, շրջվում են նշված ուղղությամբ, ոտքը գետին դնելու հետ միաժամանակ գլուխը շրջում դեպի շարքի ճակատի կողմը, որից հետո արագացված կիսաքայլերով (վազքով) շարժվում են՝ նայելով հետևից եկող զինծառայողներին, չկտրվելով նրանցից: Հետևից գնացողի կանգնելուց հետո ամեն մեկը կատարում է մեկ քայլ կամ որքան պահանջվում է հրամանով, և շրջվում դեպի շարքի ճակատի կողմը:

Կենտրոնից նոսրացման դեպքում նշվում է այդ տեղում կանգնած զինծառայողի ազգանունը: Զինծառայողը, լսելով իր ազգանունը, պատասխանում է՝ «Ե՛ս եմ», ձախ ձեռքը մեկնում առաջ, իսկ հետո թողնում այն: Ջոկի հավասարման դեպքում տարածությունը պահպանվում է:

Տեղում ջոկի խտացումը կատարվում է՝**«Ջո՛կ, աջ** (ձախ, դեպի կենտրոն) - **ԽՏԱՑԻ՛Ր** (**վազքով-ԽՏԱՑԻ՛Ր**)» հրամանով: Հրամանի կատարողական մասով բոլոր զինծառայողները, բացի նրանից, ում կողմը նշված է խտանալ, շրջվում են դեպի խտացման կողմը, որից հետո արագացված քայլով (վազքով) խտանում են մինչև սահմանված տարածություն և ինքնուրույն կանգնում ու շրջվում են դեպի շարքի ճակատը:

5.3 ՋՈԿԻ ՎԵՐԱԴԱՍԱՎՈՐՈՒՄԸ

Ջոկի վերադասավորումը միատողան շարքից երկտողան շարքի կատարվում է՝**«Ջո՛կ, մեկից երկու-ՀԱՇՎԻ՛Ր»** հրամանով: Հաշվարկը սկսվում է աջ թևից: Այդ դեպքում յուրաքանչյուր զինծառայող արագորեն գլուխը շրջում է դեպի իրենից ձախ կանգնած զինծառայողը, ասում է իր համարը և արագ գլուխն ուղղում:

Ձախթևային գլուխը չի շրջում:

Ջոկի ընդհանուր հաշվարկը կատարվում է՝ **«Ջո՛կ, հերթով-ՀԱՇՎԻ՛Ր»** հրամանով՝ նույն կանոններով: Երկտողան շարքում երկրորդ տողանի ձախթևայինը հաշվարկի ավարտից հետո զեկուցում է՝ «Ոչ լրիվ» կամ «Լրիվ»:

Ջոկի վերադասավորումը տեղում միատողան շարքից երկտողան շարքի կատարվում է՝

«Ջո՛կ, երկտողան - ՀԱՇՎԻ՛Ր» հրամանով: Հրամանի կատարողական մասով զինծառայողների երկրորդ հրամանները «մեկ» հաշվով ձախ ոտքով կատարում են մի քայլ հետ, «երկու» հաշվով՝ աջ ոտքը տանում հետ և մի քայլ աջ, «երեք» հաշվով ձախ ոտքը միացնում են աջին:

Տեղում ջոկի վերադասավորումը խտացված երկտողան շարքից միատողան շարքի կատարվում է հետևյալ կերպ.ջոկը նախօրոք բացազատվում է մի քայլ, որից հետո **«Ջո՛կ, միատողան-ՇԱՐՎԻ՛Ր»** հրամանով երկրորդ համարները դուրս են գալիս առաջին տողանի գիծ՝ «մեկ» հաշվով ձախ ոտքով կատարելով մեկ քայլ ձախ, «երկու» հաշվով աջ ոտքով մի քայլ առաջ, «երեք» հաշվով ձախ ոտքը միացնում են աջին:

Ջոկի վերադասավորումը ծավալուն շարքից շարասյան կատարվում է ջոկի աջդարձումով՝ **«Ջո՛կ, աջ -ԴԱ՛ՐՁ»** հրամանով:

Ջոկի վերադասավորումը միաշարասյուն շարքից երկշարասույն շարքի կատարվում է՝ **«Ջո՛կ, երկշարասույն քայլով -ՄԱ՛ՐՇ»** (ընթացքում՝ ՄԱ՛ՐՇ) հրամանով: Հրամանի կատարողական մասով ուղղապահն անցնում է կես քայլի, երկրորդ համարները դուրս են գալիս դեպի աջ, քայլի տակտով զբաղեցնում են իրենց տեղերը շարասյունում: Ջոկը շարժվում է կես քայլով մինչև **«Ուղի՛ղ»** կամ **«Ջո՛կ, կանգ-Ա՛Ռ»** հրամանը:

Ջոկի վերադասավորումը երկշարասյունից միաշարասյուն կատարվում է՝ **«Ջո՛կ, միաշարասույն քայլով -ՄԱ՛ՐՇ»** (ընթացքում՝ ՄԱ՛ՐՇ) հրամանով: Հրամանի կատարողական մասով ուղղապահը գնում է լրիվ քայլերով, իսկ մյուսները՝ կես քայլով: Տեղերը բացվելուց հետո երկրորդ համարները զբաղեցնում են դրանք և լրիվ քայլով շարունակում շարժումը:

Շարասյան շարժման ուղղությունը փոփոխելու համար տրվում է՝ **«Ջո՛կ, աջ (ձախ) ուսն առաջ-ՄԱ՛ՐՇ»** հրամանը: Ուղղապահը թեքվում է աջ (ձախ) մինչև «Ուղի՛ղ» հրամանը, մյուսները հետևում են նրան:

Համաձայն շարային կանոնադրության դրույթների ջոկի անձնակազմը նմանօրինակ գործողություններ կատարում է նանզենքով:

Առանձնահատկություններ կան, որոնք ոչ թե ստվերում, այլ լրացնում են զինծառայողների շարային պատրաստության աշխարհագրությունը, գործողությունների լայն շրջանակը: Միայն շարային պատրաստություն՝ ջոկի կազմով, նշանակում է շարային պատրաստության միմիայն մի չնչին մաս: Ջոկ, դասակ, վաշտ, գումարտակ, գունդ (և այլն) ամբողջությամբ ընդգրկված են

շարային պատրաստության պլանային պարապմունքների մեջ, ինչպես ծավալուն շարքերի տեսքով, հետիոտն կարգով, այնպես երթային: Քանզի շարային պատրաստությունը ինքնանպատակ չէ: Այն լրացնում է ստորաբաժանման կողմից մարտական խնդրի(ների) իրականացումը պատշաճ ձևով, որակով:

Մարտական (ուսումնավարժական) խնդիրների կատարման համար ավելի նպատակահարմար է առաջնորդվել ծավալուն շարքեր հասկացությունից: Այդ նպատակով ստորաբաժանումների ու զորամասերի մեքենաները դասավորվու են ջոկատով մեկ գծի վրա, սահմանված հեռավորության վրա:

Անձնակազմները գտնվում են մեքենաների վրա կամ շարվում են մեքենանրի առջև:

Երթային շարքում մեքենաները ստորաբաժանումում շարված են շարասյունով:

Շարային պատրաստությունը նաև լավագույն գրավականն է մարտական առաջադրանքների կատարման գործում զինծառայողների շարային կարգապահությունը:

Կանոնադրության 7-րդ գլուխը սահմանում է վաշտի (3 դասակ), գումարտակի (3 վաշտ), գնդի շարայն ստուգատեսի պայմաններն ու տեղը, կարգը, շարքերի հեռավորությունը, ստուգողի պարտականությունները, ստուգվողների պարտավորությունները ներկայացնելու կարգը և իրավունքները:

Ստուգատեսները կարող են անցկացվել ինչպես անմիջական պետեր ու հրամանատարների, այնպես էլ տեսչական ստուգումներ անցկացնելու համար նշանակված անձանց կողմից:

Վաշտի, գումարտակի, գնդի շարային ստուգատես անցկացնելու կարգն ու պահանջները նույնն են, շավալները՝ տարբեր:

Առանձին միջոցառում է գնդին մարտական դրոշի հանձնումը, որպես շարային պատրաստության պատասխանատվություն և զինվորական արժանապատվության լավագուն արարողակարգ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Շարային պատրաստությունը կոփում, առնականացնում է զինծառայողներին, նրանց մեջ արմատավորում կարգապահության, զսպվածության զգացում, ձգվածություն, սովորեցնում՝ լինել արտաքնապես կոկիկ և մաքուր հագնված, հմտորեն և ներդաշնակ գործել շարքում և մարտական գործողությունների ժամանակ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայաստանի հանրապետության ԶՈՒ շարային կանոնադրության երկրորդ հրատարակչությքն, Հաստատված ՀՀ ՊՆ 29.04.2001թ. №307 հրամանով
2. ՆԶՊ դասագիրք, 8-րդ դասարան
3. ՆԶՊ դասագիրք, 9-րդ դասարան
4. ՆԶՊ դսագաիրք, 10-րդ դասարան